

8709

99


Ա.Տ.ՐԱԿՈՒԹՅՈՒՆ
Լ. Կ. Կ. Բ ՊՐՈՊ-ԿԱԶՄ ԲԱԺԻՒ

3

8-

ԾՐԱԳԻՐ

ՀԱՄԿՈՄԿՈՒՄԻ ՆՈՐ ԸՆԴՈՒՆՎԱԾ
ԹԵԿԱՆԱՌՈՒԵՐԻ ԿՈՒՍԴՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ



15 MAY 2013

24 SEP 2006

ՀԿՊԱ

Ծ-39 4

20 NOV 2009


ԾՐԱԳԻՐ

ՀԱՄԿՈՄԿՈՒՄԻ ՆՈՐ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ
ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԴՐՈՇՏԻ ՀԱՄԱՐ

1. Հճգամյակի յերկրորդ տարին

1929 - 30 թվի ժողովրդական տնտեսության հիմնական ցուցանիշները: Արդյունաբերության արտադրանքի, արտադրության միջոցների արտադրման, հիմնական ներդրումների, աշխատանքի արտադրողականության և աշխատավարձի աճումը, ինքնարժեքի իջեցումն ու արտադրած ապրանքի վորակի բարձրացումն ըստ ընթացիկ տարվա կոնտրոլ թվերի: Ցուցանիշները գյուղատնտեսության գծով (ցանքսերի տարածության և բերքատվության բարձրացումը, հացահատիկալին և տեխնիկական կոռլատուրաների ընդհանուր և ապրանքալին արտադրունքի աճումը, համայնացված սեկտորի աճումը, հիմնական ներդրումները գյուղատնտեսության մեջ՝ մեքենալացման ու մեքենա-տրակտորալին կայանը՝ ըստ աճումը):

Հնդամյակի առաջին տարվա հաջողությունները և յերկրորդ տարվա համար նշած կոնտրոլ թվերը, վորգերազանցում են հնդամյակի ցուցանիշներին, վորպես ապացույց կամ առաջարկություն բաղաքականության ձևատության մասն ովազողից առաջ հայտցքների սնանկության:



Գրառեալ. № 5163(բ). Պատվ. № 502. Տիրաժ 550

Պետհրատի յերկրորդ տպարան Յերկանում.

Այն պալմանները, վոր անհրաժեշտ ու հնարավոր են դարձնում նախագծված թափի իրականացումն ու հնգամբակի ընթացիկ տարվա կոնտրոլ թվերի գերազանցումը։ Ընթացիկ տարվա տնտեսական պլանի իրագործումը՝ վորպես սոցիալիստական շինարարության հաջողությունների վճռական պահման և վորպես կենտրոնական խնդիր՝ բանվոր դասակարգի բոլոր կազմակերպությունների համար։

Համկ(ը)կ կենտրոնի հունվարի դիմումը արտգինալանի կատարման մասին։

Զեռնարկության արտֆինալանը և նրա լիակատար իրագործման խնդիրներն ու պահմաններ։

2. Գարնանացանի կամպանիան յեվ կուսակցության ու բանվոր դասակարգի խնդիրները

Գարնանացանի կամպանիան և գյուղատնտեսության արտադրական ուժերի բարձրացման ու նրա համայնացման հունով առնելու խնդիրները։ Գարնանացանի կամպանիան՝ վորպես գյուղատնտեսության մասսական համայնացման նոր վերելքի յիշակու։ Գարնանացանի կամպանիայի հիմնական խնդիրները, բերքատվության աճումը, գյուղատնտեսության ընդհանուր ու ապրանքային արտադրանքի և համայնացման սեկտորի աճումը։

Գարնանացանի կամպանիան՝ վորպես մի ուղի՝ պլանը գյուղատնտեսական արտադրության մեջ մըտցընելու համար։ Ցանքսի կամպանիայի պլանը գյուղ հասցնելու։ Ցանքսի կամպանիայի արտադրական ծրագիրն ու աշխատանքի կազմակերպումը կունտեսություններում։

Որինակելի բանվորական ծրագիր կոլտնտեսությունների համար։ Գարնանացանի պլանի իրագործման խնդիրները գյուղատնտեսության անհատական սեկտորում։

Նոր բերքի կոնտրակտացիան կուտնտեսությունների և գյուղատնտեսական անհատական տնտեսությունների գծով, վորպես նոր բերքը պլանային ու կազմակերպված ձեռվ ուեալիզացիայի ընթարկելու և շուկան կարգավորելու միջոց։ Կոնտրակտացիան վորպես գյուղատնտեսության վրա ազդելու միջոց՝ նրա արտադրողականությունը բարձրացնելու նպատակով։ Կոնտրակտացիան վորպես կապիտալիստական տարրերի վրա հարձակվելու և կոլեկտիվացման թափն ուժեղացնելու միջոց։

Բանվոր դասակարգի գաշինքի ամրապնդման խնդիրները՝ գյուղացիության հիմնական մասսաների հետ, գարնանացանի կամպանիայի ընթացքում։ Զքավորության ու բատրակության կազմակերպման խընդիրները։ Վճռական պայքարի անհրաժեշտությունն ինչպես կոլեկտիվացման թափը դանդաղցնելու աջողորդունիստական արտահատության դեմ, այնպես ել մասսայական կոլեկտիվացման ժամանակ կուսակցության գծի աղավաղութերի դեմ՝ վարչական մեթոդներ գործադրելու, կամավորության սկզբունքը խախտելու, առանձին շրջանների առանձնահատկությունները հաշվի չառնելու ձերբով։

Համկ(ը)կ կենտրոնի 1930 թ. մարտի վորոշումը կոլխոզարժման մեջ կուսակցի աղավաղութերի դեմ պայքարելու մասին։

Երդյունաբերական բանվորների ակտիվ մաս-

Նակցությունը գարնանալին գյուղատնտեսական կամապանիալի ոգտագործումը՝ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում բանվոր դասակարգի դեկավար գերի հետագա ամրացման համար:

Յ. Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հիմնական հարցերը

Գյուղատնտեսության զարգացման թափի հետ մնալը նախընթաց տարիներին, վոր արմատացել եր զյուղատնտեսության ցըվածության, մանրության և տեխնիկական հետամնացության մեջ։ Գյուղատնտեսության զարգացման լերկու ուղիները (կապիտալիստական և սոցիալիստական), կուսակցության հաջողությունները գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ճանապարհին։ Գյուղատնտեսության տեխնիկալիքարձրացումը վորպես աշխատանքի արտադրողականության բարձրացման միջոց գյուղատնտեսության մեջ։ Գյուղացիական գործիքների և ինվենտարի արտադրական կոռպերացումը վորպես մի հսկաքայլ գեղի աշխատանքի արտադրողականության բարձրացումը և նախալաւրասատություն՝ նորագույն տեխնիկալիքարձրացման վրա կառուցված կոռպերացիալին անցնելու։

Գյուղատնտեսության արտադրական կոռպերացումը, վորպես կոռպերացման լինինյան պլանի անբաժանելի բաղադրիչ մի մասը՝ կոլտնտեսությունները վորպես արտադր, բարձր կոռպերացիալիքները՝ կոլտնտեսությունները վորպես տնտեսության սոցիալիստական ձևեր։ Զքավորմիջակ գյուղացիության գեղի կոլտնտեսություններն ունեցած վերաբերմունքի մեջ կատարված

արմատական բեկումը։ Շրջանների, նահանգների ու մարզերի համատարած կոլեկտիվացումը։ Համատարած կոլեկտիվացման շրջաններում կուլակի շահագործելու ձգտումը սահմանափակելու և նրան դուրս մղելու քաղաքականությունից։ Կուլակությունը վորպես դասակարգ վերացնելու քաղաքականությանն անցնելը։ Վոչ համատարած կոլեկտիվացման շրջաններում կուլակի սահմանափակումը և նրան դուրս մղելը վորպես ոժանդակ լոկունգ՝ կուլակությունը վորպես դասակարգ վերացնելու ներկա շրջանի հիմնական լողունգին։ «Կուլակությունը վորպես դասակարգ վերացնելու» և «կուլակությունը սահմանափակելու» լողունգները վորպես լերկու իրավահավասար և ինքնուրույն լողունգներ պատկերացնելու անթույլատրեկիությունը։ Դասակարգային պայքարի սրման անխուսափելիությունը կապված կուլակությունը վորպես դասակարգ վերացնելու քաղաքականության հետ։

Կոլտնտեսությունների նոր խնդիրները զլույզատնտեսության մասսայական կոլեկտիվացման պայմաններում։ Գյուղատնտեսական արտելը վորպես հիմնական ողակ և անհատական տնտեսություններն արտադրական կոռպերացման մեջ ընդդրկելու գերազանցող ձև, կոլտնտեսարժման ներկա շրջանում։ Արտելի արտադրական միջոցների՝ հողի, բանող անասունների, ինվենտարի, մեքենաների և ալյնի հանրայնացման և կոլխոզների անհատական ոգտագործման տակ մընացող (ընակելի շինքեր, մանր բանջարանոցներ, ընտանի թուզուններ և այլն) միջոցների տարբերությունն ըմբռնելու անհրաժեշտությունը։

Ներկա շրջանում բացակայում են պայմանները

վորպես գերակռող ձեւ լայնորեն տարածելու համար զյուղատնտեսական կոմունաները, վորտեղ համայնացված և վոչ միայն տրտադրությունը, այլ և բաշխումը: Անառնապահական և զյուղատնտեսության տեխնիկական ճյուղերի համայնացման խնդիրը: Աշխատանքի կազմակերպման խնդիրը կոլտնտեսություններում:

Խորհ. տնտեսությունները, նրանց գերն ու նշանակությունը զյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում: Գյուղատնտեսության ինդուստրիացման խնդիրը:

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հաջողությունները վորպես ապացուց կուսակցության քաղաքականության ճշության և աջ ոպողիցիայի հայացքների կապիտուլյանտական ելության: Աջ ոպորտյունիզմի և «ձախ» թեքությունի գեն պայքար խնդիրները մասսայական կոլլեկտիվացման ներկա պայմաններում և կուլտակությունը վորպես գառակարգ վերացնելու քաղաքականության կիրառումը:

4. Ցեղերի ծողովդական Տնտեսության սոցիալիստական վերտակառուցման հնգամյա պլանը

Ցեղերի ինդուստրիացումը—կուսակցության գլուխավար գիծն և Ծանր ինդուստրիան, արտադրության միջոցների արտադրումը վորպես սոցիալիզմի կառուցման հիմնական հենարան: Արտաքին ու ներքին պահմանները, վորոնք թելադրում են ինդուստրիացման արագ տեմպ վերցնել: Տեխնիկական-անտեսական տեսակարգից առաջարկը կապիտալիստական ինդուստրիացման հասնելու և անցնելու մեջ անդամայակի կիրառման թափնակացնելու համարական վերահավատությունը հնգամյակն իրագործելու համար:

Ծանր ինդուստրիան վորպես գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման բանալին: Գյուղատնտեսության տեխնիկական վերակառուցումն ու համայնացումը վորպես սոցիալիստական ինդուստրիացման մի հիմնական մասը: Կուսակցության պայքարը աջ և «ձախ» ոպորտյունիստական տեսակետների գեմ ինդուստրիացման տեմպի խնդրում, վորպես պայման՝ կուսակցության գլխավոր գիծն իրագործելու համար:

Ցեղերի ինդուստրիացման և ժողովրդական տնտեսության սոցիալական վերակառուցման արտացոլումը հնգամյա պլանի մեջ (հնգամյակի քանակական ու վորական հիմնական ցուցանիշներ): Հնգամյակի թափը և նրա գերակատարումը՝ հնգամյակն իրագործելու ընթացքում: Հնգամյակն իրագործելու ժամկետներն արագացնելու խնդիրը (հնգամյակը և տարրում): Ցոթմայա բանվորական որը, անընդհատ բանվորական շաբաթվա անցնելը, սոցիալիստական մշցումը՝ վորպես բանվոր դասսակարգի լրացուցիչ պահեստի ուժեր՝ վորոնք ապահովում են հնգամյակի կիրառման թափնակացնելու համարական վերահավատությունները: Աջ ոպորտյունիստական թերահավատությունը հնգամյակն իրագործելու հնարավորության մեջ:

Հնգամյա պլանն իրագործելու դժվարությունները և կուսակցության ու բանվոր դասսակարգի խնդիրները:

Ձեռնարկության հնգամյա պլանը, նրա գերը ցեղերի ինդուստրիացման գործում:

5. Կուսակցության տնտեսական ֆադամեկանությունը յեվ դասակարգային հարաբերությունները՝ վերակառուցման շրջանի նոր պայմաններում

Կուսակցության տնտեսական քաղաքականության հիմնական խնդիրները կապիտալիզմից սոցիալիզմ անցման շրջանում:

Տնտեսական հինգ ձևերը ԽՍՀՄ եկոնոմիկալում՝ Սոցիալիստական սեկտորի առաջնակարգ դերը, Պետական արդյունաբերության ձեռնարկությունները, խորհրդային տնտեսությունները վորպես հետեղական սոցիալիստական տիպի ձեռնարկություններ:

Նեպի ելությունը, Նեպը վորպես միաւն նահանջ հասկանալու սխալ լինելը, Նեպի երկու շրջանները՝ Նեպի ռեկոնստրուկտիվ շրջանը վորպես սոցիալիստական ծավալուն հարձակման շրջան:

Դասակարգային պայքարը նեպի պայմաններում: Բանվոր դասակարգի և գյուղացիության հիմնական մասսաների դաշինքի դաստկարգալին ելությունը: Դասակարգային պայքարի սրումը վերակառուցման շրջանում: Բանվոր դասակարգի և չքաղորմիջակ դյուղացիության արտադրական կապի ամրապնդման խնդիրները վերակառուցման շրջանում: Պրոլետարիատի պայքարը քերկի ժողովրդական տնտեսության միջից կապիտալիստական տարրերը ստհմանափակելու և դուրս մղելու համար: Մանր անհատական գյուղացիական տնտեսության անհատական գյուղացիական տնտեսությունը վորպես հենակետ կապիտալիզմի տարերային դարգացման համար: Կուսակցության շրջադարձի նշանակությունը, կուլակության

շահագործելու ձգտումը սահմանափակելու և նրան դուրս մղելու քաղաքականությունից դեպի կուլակությունը վորպես դասակարգ վերացնելու քաղաքականությունը:

Լենինի նախատեսած՝ սոցիալիստական շինարարության թափի հսկա արագության վրա հասնելը: ԽՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման հնարավորությունը՝ պատմականորեն նվազագույն ժամանակամիջույնում:

Աջ և «ձախ» ուղղությունների սխալները նեպի ելության, դասակարգերի հարաբերության, բանվոր դասակարգի և գյուղացիության հիմնական մասսաների դաշինքի և բանվոր դասակարգի դեկավար դերի խնդիրներում:

6. Խորհուրդների դերն ու խնդիրները սոցիալիստական շինարարության ներկա շրջանում

Խորհրդային իշխանությունը վորպես բանվոր դասակարգի և գյուղացիական հիմնական մասսաների դաշինքի մի ձե, ուր բանվոր դասակարգը զեկավար դեր ունի: Խորհուրդները վորպես պրոլետարիատի գրկատառությի որգաններ: Խորհուրդները վորպես զենք բանվոր դասակարգի ձեռքին՝ սոցիալիզմի կառուցման համար: Խորհուրդների դերն ու խնդիրները արտֆինանսների իրազորձման և գյուղատնեսության մասսայական կոլեկտիվացման պայքարում:

Գյուղիսորհուրդների աշխատանքի կառուցումը գյերեսներդ դեպի կոլիսոզները լողունզի տակ: Խորհուրդները համատարած կելեկտիվացման շրջաններում: Համատարած կոլեկտիվացման շրջաններում

գյուղիորհուրդները վերացնելու լողունգի սխալ ու ոպօրտունիստական լինելը: Խորհուրդների խնդիրները բաժանվությունն ու չքավորությունը կազմակերպելու գործում: Բանվոր դասակարգի ակտիվ ոգնությունը գյուղիորհուրդների աշխատանքների վերակառուցման գործում:

Ամերող խորհրդավորն ապարատի աշխատանքների վերակառուցման և բարելավման խնդիրները: Պալքարը, բյուրոկրատիզմի գեմ, վորպես հիմնական խնդիր: Խորհրդավորն ապարատի գառումը: Լայն մասսաների իրական մասնակցության ձևերը պետապարատի բարելավման և բյուրոկրատիզմի դեմ պալքարելու գործում: Ինքնաքննադատության ծավալումը, բանվորական բրիգադներ և «Եթեթև հեծելազորի» ջոկատներ, ձեռնարկության շեֆություն: Բանվորների, բարտակների չքավորների, կոլխոզնիկների մասսական առաջքաշումներ պետապարատի գեկավար աշխատանքներում:

7. Սոցիալիստական մշցության դերն ու նշանակությունը նոր ցըանում

Աշխատանքի արտադրողականության բարձրացումն ու աշխատանքի կազմակերպման ավելի բարձր ձևերի հասնելը սոցիալիստական նոր հասարակակարգի կառուցման հիմնական պալմանն եւ:

Սոցիալիստական մրցումը՝ վորպես մասսաների ձեռներեցությունն ու սահմանադր ակտիվությունը կազմակերպելու մեթոդ՝ աշխատանքային դիսցիպլինայի համար պալքարելու, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու, աշխատանքի կազմակերպման նոր ձևեր ստեղծելու գործում: Սոցիալիս-

տական մրցումը վորպես բանվոր գասակարգի լրացուցիչ պահանջմի ուժը, վորպես ապահովում և սոցիալիստական շինարարության թափի արագացումը: Հարվածավորն ըրիգագների շարժման գերն ու նշանակությունը: Սոցմրցման և հարվածային ըրիգագների շարժման լայն ծավալումը վորպես անհրաժեշտ պայման՝ հնգամյա պլանի և ընթացիկ աարվա անտեսական պլանի իրականացման համար: Կուլտուրական հեղափոխության խնդիրներն ու սոցիալիստական մրցումը: Սոցիալիստական մրցումը և պետապարատի բարելավման ու բյուրոկրատիզմի դեմ պայքարելու խնդիրները:

Նորը բանվոր գասակարգի շարքերում, մասսաների տկուիվության բարձրացումը, սոցմրցման նոր թափը: Սոցմրցման և հարվածային ըրիգագների շարժման զեկավարության խնդիրները՝ կուսակցական, տնտեսական և արհեստական կազմակերպությունների կողմից:

Բոլոր կոմունիստաների ու կոմիերիտականների մասնակցությունը սոցմրցման ու հարվածային ըրիգագներին:

Սոցիալիստական մրցումն ու ինքնաքննադրությունը: Պրոլետարիատի գասակարգավորն ինքնագործունելությունն ու միանձնյա դեկավարությունը:

Սոցմրցման ու հարվածային ըրիգագների դրությունը ձեռնարկության մեջ:

8. Կուսակցության խնդիրները կուլտուրական շինարարության առաջիկում յեվ կադրերի պատրաստումը

Յերկրի կուլտուրական հետամնացությունը վորպես սոցիալիստական շինարարության մի շարք գլու-

վարությունների աղբյուրը: Բուրժուական ու մանր-բուրժուական իդեոլոգիական ազդեցությունները պրո-լետարիատի ներում: Այդ ազդեցության ձևերը՝ կրո-նը, նացիոնալիզմը, մանր-բուրժուական թափթըվա-ծությունն արտադրության մեջ:

Կուլտուրական հեղափոխությունը վորպիս սո-ցիալիստական շինարարության հաջողությունների պայման: Լենինը կուլտուրական հեղափոխության խնդիրների մասին: Մասսաների կուլտուրական մա-կարդակի բարձրացումը, ոլորչարը «ղեկավարման կուլտուրափի» համար, գիտակցական սոցիալիստական աշխատանքի սկզբունքները մասսաների մեջ մտցնե-լու համար, վորպիս կուլտուրական հեղափոխության հիմնական խնդիրները: Կուլտուրական շինարարու-թյան թափի ըստամենտինի արագացման անհրաժեշ-տությունը՝ յերկրի ինդուստրիացման հսկա թափի և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուց-ման պայմաններում: Պայքարը ընդհանուր գրագիտու-թյան համար: Ընդհանուր պարտադիր ուսումնացնելը:

Դասակարգակին պալքարը կուլտուրական ֆրոն-տում: Բանվոր գասակարգի ղեկավար վերը կուլտու-րական հեղափոխության մեջ: Դյուզի կուլտուրական բարձրացման, պրոլետարական ազդեցության ամրա-պնդման և գյուղի չքավոր-միջակային մասսաներին, կոլխոզներին կոմունիստական վոգով վերադաս-տիարակելու խնդիրները: Վճռական պալքար կուլտ-կարին ազդեցությունների դեմ (շովինիզմ, հակասեմի-տիզմ, կրօնական ազդեցություններ և ալլն): Այս խնդիրների առանձնահատուկ նշանակությունը գյու-դատնտեսության համատարած կոլեկտիվացման պար-

մաններում: Կուլտուրական շինարարության գործնա-կան խնդիրները խորհրդակին և կոլեկտիվ տնտեսու-թյուններում, համատարած կոլեկտիվացման շրջան-ներում: Կուլտուրական շինարարության ասպարիզում կուսակցության դասակարգային գծի աղավաղումների մեմ վճռական պալքար մղելու անհրաժեշտությունը:

Կազմերի խնդիրը վերակառուցման շրջանում: Նրա նշանակությունը կապված սոցիալիստական շի-նարարության հսկա թափի և դասակարգային պալքա-րի սրման հետ: Պրոլետարական մասնագետները «կա-ռուցվող սոցիալիստական տնտեսության նոր տիպի ղեկավարներ ու կազմակերպիչներ» պատրաստելու գործն ամեն կերպ արագացնելու և բարելավելու խըն-դիրները:

Պայքարի դժվարությունները կուլտուրական ֆը-րոնում: Լայն մասսաների ակտիվ մասնակցությու-նը կուլտուրական շինարարությանը, վորպիս պայ-ման այդ դժվարությունները վերացնելու: Սոցիալիս-տական մրցությունը, կուլտուրաշավի մեթոդներ, վոր-պիս ճասասաների ակտիվությունը մոբիլիզացիայի լին-թարկելու ձևեր՝ կուլտուրական շինարարության գոր-ծում, կուլտուրական աշխատանքի ձևերի ու մեթոդ-ների վերակառուցման խնդիրները, նրանց հարմարե-ցումը աշխատանքի ու կենցաղի նոր պայմաններին (անընդհատ արտադրական շաբաթ): Կուլտուրական շինարարությունը հնդամլակում:

Կուլտուրական աշխատանքի և կուլտուրական շի-նարարության գործնական խնդիրները ձեռնարկու-թյան մեջ (շրջանում):

9. Կուսակցությունն ու բանվոր դաստիարագը
պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմայում

Պրոլետարիատի դիկտատուրայի հիմնական խընդիրները (շահագործողներին ճնշելը, վոչ պրոլետարական աշխատավոր մասսաներին վեկավարելը անտեսական սոցիալիստական ձևերին անցնելու գործում, դասակարգերի վերացումն ու սոցիալիստական հասարակության կառուցումը): Պրոլետարիատի դիրք՝ վորագետականությունը մարտիկ՝ բոլոր աշխատավորների աղատագրության և սոցիալիստական հասարակությունն կառուցելու համար: Պրոլետարիատի վերաբերմունքը գեղի գանազան դասակարգերը՝ պրոլետարիատի դիկտատուրայի շրջանում:

Բանվոր դաստիարագի և զյուղի չքավորության դաշինքը միջակ գյուղացիության հետ՝ ընդգեմ լուրակի: Պրոլետարիատի դիկտատուրան դասակարգային պայքարի շարունակությունն և նոր ձևերով: Պրոլետարիատի դիկտատուրայի ելության աջ ոպպորտյունիստական և տրոցիկիստական ազավադումները:

Հեղտափսխական կուսակցության գերն ու նշանակությունը բանվոր դաստիարագի հեղափոխական պայքարի ընթացքում: Կոմմունիստական կուսակցությունը բանվոր դաստիարագի առաջավոր, առօտվել գիտակից ու կազմակերպված մասն և: Բանվոր դաստիարագի կուսակցությունն ու մյուս կազմակերպությունները: Խորհուրդները, արհմիությունները, կոռպեհրացիան, կոմյերիամիությունն ու մյուս կազմակերպությունները վորագետ կուսակցությունից գեղի ժամանակական պահանջման մասնող փոկեր: Բանվոր դաստիարագի բոլոր կազ-

մակերպությունների աշխատանքների վերակառուցմը՝ համաձայն վերակառուցման շրջանի պահանջների և մասսաների ակտիվության լայն մորիլիզացիայի խնդիրների՝ սոցիալիստական շինարարության գործում: Արհմիությունների աշխատանքի վերակառուցման խնդիրները ներկա պայմաններում («յերեսներս գեղի արտադրություն» շրջադարձը արհմիությունների աշխատանքներում):

Կուսակցության առաջավոր գեկավար գերը բանվոր դաստիարագի պայքարի բոլոր ձևերի մեջ: Կուսակցության պայքարը նեղ-համքարական շահերի և բանվոր դաստիարագի առանձին խմբերի մեջ յեղած հետամմած տրամադրությունների և մանր-բուրժուական և կուլակալին ազգեցությունների գեմ, վոր մացնում են բանվոր դաստիարագի մեջ: Կուսակցության գեկավար գերի ամրապնդման խնդրի առանձնակի նշանակությունը ներկա շրջանում: Կուսակցության պրոլետարական կորիգի ամրապնդմը իհաշիվ առաջավոր բանվորների ու բատրակների, կուսակցության անդամների քաղաքական մակարդակի բարձրացումը, ամենորդական կազմը մասսաների հետ՝ վորագետական կուսակցության գեկավար գերն ամրապնդելու և հեղինակությունը բարձրացնելու մասսաների աշխատում: Կուսակցության զտումն ու նրա նշանակությունը կուսակցության մարտունակությունը ամրապնդելու գործում՝ վերակաստացման հիմքներներն իրագործելու համար:

* Ա ՍԵՍԱՆԻԿԱՍԻ *
Անգլան
Պահանջման համար 12536.57

10. Կուսակցության կանոնադրության հիմունքները

Կուսակցական բջիջը վորպես կուսակցական հիմնական կազմակերպություն։ Կուսակցական բջիջների կառուցվածքի արտադրական սկզբունքը։ Կուսակցության կազմակերպչական կառուցվածքը (Կենտկոմից միջև բջիջ)։

Դեմոկրատական ցենտրալիզմը վորպես կուսակցության կազմակերպչական կառուցվածքի հիմնական սկզբունք։ Ներկուսակցական դեմոկրատիա, ներկուսակցական դեմոկրատիայի ձևերը կուսակցության պատմության արարեր շրջաններում։ Կուսակցության ղեկավար մարմինների ընտրականությունը։ Կուսակցության անդամների ակտիվ մասնակցությունը կուսակցության քաղաքականության բոլոր հարցերի լուծմանը։ Խստագույն կուսակցական դիսցիպլինան։ Առանց բացառության կուսակցության բոլոր անդամների համար պարտադիր և յենթարկվել կուսակցության վորոշումներին։ Կուսակցական ֆրակցիաների խնդիրներն ու աշխատանքը վոչ կուսակցական կազմակերպություններում։ Կոմմունիստների պարտականությունն եւ լինել անկուսակցականների ղեկավարը և կուսակցության գծի ակտիվ կիրառողը։ Կոմմունիսները սոցիալիստական շինարարության ֆրոնտի առաջավոր ջոկատն են։

Կուսակցության գաղափարական ու կազմակերպչական միասնության համար մղվող պայքարը վորպես հիմնական պայման, վորի շնորհիվ կուսակցությունը կարող ե իրականացնել պրոլետարիատի դիկտատու-

րան ղեկավարելու խնդիրներն։ Ֆրակցիոնականության ելությունը, կուսակցության 10-րդ համագումարի վորոշումը կուսակցության միասնականության և կուսակցության ներսում ֆրակցիաների ու խմբավորումների անթույլատրելիության մասին։

Կուսակցության անդամների պարտականությունները սոցիալիստական վերակառուցման ներկա շրջանում կուսակցության առաջ դրված խնդիրների աճող բարձացման պայմաններում (կուսակցության անդամների անձնական որինակն ու նախաձեռնությունը արտֆինալլանն իրագործելու համար, աշխատանքի արտադրողականությունն ու աշխատանքի դիսցիպլինան բարձրացնելու գործում, կոլխոզ շինարարություն, սոցմրցման և հարվածային բրիգադների ծավալման հարցում և այլն),

11. Կուսակցության ժինարարության հիմնական հարցերն ու կուսակցական աշխատանքի վերակառուցումը ձեռնարկություններում

Զեռնարկություններում կուսակցական ամբողջ աշխատանքի մեջ վճռական շրջադարձ կատարելու անհրաժեշտությունը։ «Եերեսներս դեպի արտադրություն»։ Տնտեսական պլաններն իրագործելու համար մղվող պայքարը վորպես կուսաշխատանքի հիմնական խնդիրը՝ ձեռնարկությունների մեջ կուսակցական կազմակերպությունը վորպես մասսաների ակտիվության քաղաքական դեկավար ու կազմակերպիչ տնտեսական շինարարության մեջ։ Տնտեսական ու արհեստակցական կազմակերպությունների դերը ձեռնարկություններում։

Կուսակցության հրահանգների նշանակությունը
միանձնյա զեկավարության մասին և այդ հրահանգ-
ների գործնական կիրառման խնդիրը ձեռնարկության
մեջ:

Կուսակցական ու արհեստակցական կազմուկեր-
պությունների խնդիրները ձեռնարկություններում
պետապարատի բարեհավաման և բյուրոկրատիզմի զեմ
պայքարելու գործում:

Կուսակցական կազմակերպությունների և կու-
սակցության առանձին անդամների դերն ու մասնա-
կությունը արտադրական խորհրդակցությունների աշ-
խատանքներում, բանվորական մասսական ժողով-
ներում, քաղաքական մասսալակոն կամպանիաներում
(գործարկությունների, խորհուրդների վերնարություն-
ներ, հավաքական պայմանագրերի հնքում և այլն):

Լայն ինքնաքննադատության ծավալումը վոր-
պես մասսանների ակտիվությունն ու ձեռներեցու-
թյունը կազմակերպելու արտադրական կյանքի թե-
րություններն ու հիմնադաշին յերեսութները և բյու-
րոկրատիզմի զեմ մղվող պայքարում կուսակցության
դասարգային գծի աղավաղումները գրսնորելու պայ-
ման: Ինքնաքննադատությունը ճնշելու դեմ վճռական
պայքար մղելու անհրաժեշտությունը:

Կուսակցության աճման կարգավորման խնդիր-
ներն ու առաջավոր բանվորներին կուսակցության
մեջ ընդունելու:

Կուսակցական կազմակերպության կառուցվածքը
ձեռնարկությունում, կուսակցական աշխատանքի ծան-
րության կենտրոնը ցեխերը տեղափոխելը: Կուսակ-
ցական կազմակերպությունների ստորին ողակների

ամբապնդման խնդիրները ձեռնարկություններում:
Սմբնային և խմբակային կազմակերպիչներ: Վողջ կու-
սակցական աշխատանքի թափի ուժեղացումը, պար-
տականությունների ճիշտ բաշխումը և կուսակցու-
թյան անդամների պատասխանառվության բարձրա-
ցումը իրենց հանձնարարած աշխատանքների համար,
կուսակցական ակտիվի կազմերի ընդլայնումը՝ վորպես
կուսապարատի վերակառուցման հիմնական խնդիրները
ներկա պայմաններում: Զերոնարկության մեջ վողջ կուս-
աշխատանքի առավել հարմարեցման խնդիրը՝ համա-
ձայն սմբնային աշխատանքների և անընդհատի անց-
նելուց ստեղծված պայմանների:

Կուսակցության անդամների, թեկնածուների և
անկուսակցական ակտիվի քաղաքական և թեորետիկ
մակարդակի բարձրացման խնդիրները:

Կուսակցիաների զեկավարությունը ձեռնար-
կության հասարակական կազմակերպություններում:

Կոմլեքտական կազմակերպության դերն ու նշա-
նակությունը ձեռնարկություններում:

12. Միջազգային հեղափոխության ուղիները

Կապիտալիստական տնտեսության ժամանակա-
կից ճգնաժամը: Արտադրական ապահովարատի, սպառ-
ման շուկաների գրության և մասսաների գնողակա-
նության միջև լեղած հակասությունների ծալքահեղ
սրումը: Այդ սրվածության արտահայտությունը Հյու-
սիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների գերար-
տագրության ճնշաժամի մեջ: Ամերիկական կրիզիսը
դառնում է համաշխարհային ճնշաժամ:

Տնտեսական ճգնաժամի հետեանքները: Գործադրկության հսկայաթափ աճումը, բանվորական մասսաների կենսական մակարդակի իջնելը, բանվորական որվա յերկարացնելը: Դասակարգային պալքարի ծալքանեղ սրումը կապիտալիստական յերկրներում և հեղափոխական շարժման նոր վերելքի աճումը: Գործադրության պալքարի աճումը, գործազուրկների մասսական շարժումները, մասսայական ցույցերը: Պարքարի միջազգային որը գործազրկության դեմ (մարտի 6-ը) կապիտալիստական յերկրներում: Արյունահեղ ընդհարումներ բուրժուական պետության բռնակալ ապագաբարսի հետ: Տնտեսական պայքարի վոխանցումը՝ քաղաքական պայքարի:

Հակասությունների սրումը իմպերիալիստական պետությունների միջնեւ: Պատերազմի վտանգի սրումը: Արևելքի ճնշված մասսաների պալքարի սրումը իմպերիալիզմի գեմ: Բանվորական շարժման վերելքը գաղութային յերկրներում: Տարերաբին ապստամբություններ հետամեաց գաղութային յերկրներում:

Ժամանակակից հակասությունների սրումը ԽՍՀՄ և կապիտալիստական աշխարհի միջնեւ ժերջին ժամանակներիս հակախորհրդային կամպանիան: «Խաչակրած արշավանք» ԽՍՀՄ-ի գեմ: ԽՍՀՄ-ի և կապիտալիստական աշխարհի միջնեւ ժեղած հակասությունների անհարթելիությունը: Սոցիալիստական շինարարության հաջողությունները ԽՍՀՄ-ում վորպես կապիտալիստական ստարիլիզացիաէի խախտման ֆակտոր և վորպես հենարան ու շարժիչ ուժ միջազգային հեղափոխության: Հասունացող համաշխարհային ճգնաժամն ու սոցիալիստական շինարարության հաջողությունը:

Թյունները ԽՍՀՄ-ում վորպես ֆակտոր իմպերիալիզմի կողմից ԽՍՀՄ-ի վրա հարձակվելու համար: Պատերազմը ԽՍՀՄ-ի դեմ վորպես ընթացիկ շրջանի գըւխավոր վտանգը: Միջազգային պրոլետարիատի և ԽՍՀՄ-ի բանվոր գասակարդի խնդիրները պատերազմի վտանգի պայմաններում:

Կապիտալիզմի ճգնաժամի ժամանակակից սրումը վորպես բնորոշ գիծ կապիտալիզմի հետպատերազմյան զարգացման յերրորդ շրջանի և վորպես ապացուցյալ կապիտալիստական ստարիլիզացիայի (կայունացման) ժամանակավոր, անհամաչափ և յերերուն լինելուն:

Սոցիալ-գեմոկրատիայի սոցիալ-ֆաշիզմ դառնալը: Սոցիալ-ֆաշիզմի բացահայտ պաշտպանությունը բուրժուազիային, յիրս վերջինս հարձակվում և բանվոր գասակարզի վրա: «Բանվորական» կառավարությունները և սոցիալ-գեմոկրատիայի մասնակցությունը բուրժուական կառավարություններին: Սոցիալ-գեմոկրատական կուսակցությունները վորպես բուրժուազիաի ֆաշիստական հարվածային ջոկատներայն պայքարում, վոր մզում և բուրժուազիան բանվորական շարժման բարձրացման դեմ (սոց-գեմոկրատ Զեվերինգի որինագիծը ու ույսստագում՝ կոմմունիստների դեմ), ազգային հեղափոխական շարժումների դեմ զաղութներում և ԽՍՀՄ-ի դեմ պատերազմ պատրաստելու գործում: Անհրաժեշտ և, վոր կոմկուսակցությունը վճռական պայքար մղի սոցիալ-գեմոկրատիայի դեմ, մահավանդ նրա «Ճախ» թեի դեմ և բանվորի դեմ, մահավանդ նրա «Ճախ» թեի դեմ:

Կոմինտերնի խնդիրներն ու տակտիկան կապի-
տալիզմի ճգնաժամի աճման և հեղափոխական շարժ-
ման վերելքի ներկա պայմաններում։ Բանվոր դա-
սակարգի մեծամասնությունը զբավելը վորպես կոմ-
կուսակցությունների հիմնական խնդիրը կոմկուսակ-
ցությունների պայքարի ձևերն ու մեթոդները բան-
վոր դասակարգի մեծամասնությունը զբավելու հա-
մար։ Կոմկուսակցությունների աշխատանքի խնդիր-
ները արհմիություններում։ Գործադուլային պայքարը
խորացնելու, գործազուրկների շարժումը ղեկավարե-
լու, աշխատողների և գործազուրկ մասսայի պայքարի
հարցերը համաձայնեցնելու հարցը։

Անկազմակերպվածների մասնակցությունը դա-
սակարգային պայքարին։ Գործողության կոմիտեները,
վորոնք համախմբում են կաղմակերպված և անկազ-
մակերպ բանվորական մասսաները։ «Դասակարգը դա-
սակարգի դեմ» քաղաքականության կիրառումը։ Պրո-
լետարտիզան մասսայական լելույթներին կոմմունիստ-
ների ակտիվ մասնակցությունը և նրանց անհաջո-
պայքարը սոցիալ սեփորմիստների և մասնավանդ նը-
րանց ձախ թեր դեմ։

Կոմկուսակցությունների պայքարը՝ ազգային-
հեղափոխական շարժումների մեջ հեղեմոնիա ձեռք-
բերելու համար։

Կոմինտերնի բալլիկացումն ու պայքարը թե-
քումների դեմ։ Կոմինտերնի և նրա սեկցիաների պայ-
քարը արոցկիզմի դեմ։ Աջերն ու հաշովողականները
Կոմինտերնի մեջ, վորպես սոցիալ-դեմոկրատական ա-
պեհատուրա բանվորական շարժման մեջ։ Աջերի ոպ-
պորտյունիստական հայացքները կոմինտերնում՝ լիր-

րորդ շրջանի եյության, ԽՍՀՄ-ի դեմ պատրաստվող
պատերազմի վտանգի, սոցիալ-դեմոկրատիայի և մա-
նավանդ նրա ձախ թեր դեմ վճռական պայքար մղե-
լու անհրաժեշտության խնդիրների սաման։ Աջերը
«կազմակերպված իմպերիալիզմ» սոցիալ-դեմոկրատա-
կան թերիայի մեջ են ընկնում։ Կոմինտերնի գործ-
կոմի 10-րդ պլենումը գտավ, վոր անհամատեղելի յեն
կոմկուսակցության պատկանելու ու աջ թեքման տե-
սակետները պաշտպանելը։

Կոմինտերնի անհաջո պայքարը լերկու ֆրոն-
տում, մանավանդ աջ թեքման և նրա նկատմամբ
հաշտվողական վերաբերմունքի դեմ։

13. Պայքարը յերկու ժընթով

Կուսակցության պատմությունը, զա բայլիկնե-
րի պայքարի ոպատմությունն և հեղափոխական մարք-
սիզմ-լենինիզմի համար և ընդդեմ բացահայտ ոպպոր-
տյունիզմի ու ձախ ֆրազների տակ թագնված ոպ-
պորտյունիզմի։ Ոպպորտյուն խմբավորումների պայ-
քարը կուսակցության միասնականության դեմ՝ վոր-
ուուս պրոլետարիատին թշնամի դասակարգալին ուժե-
րի արտահայտություն։ Աջ և ձախ թեքումները կու-
սակցության մեջ կուսակցության պատմության զա-
նազան շրջաններում (Բրեստի շրջանը, պրովինչիութե-
նական դիսկուսիան 1921 թվին, արոցկիստական ոպ-
պողիցիան 1923—24 թվին, «նոր ոպպորտյուն» կու-
սակցության 14 րդ համագումարից հետո)։ Տրոցկիզ-
մի մենշերյան եյությունն ու հականեղափոխական
բնույթը, Տրոցկիզմի սնանկությունը։ Աջ թեքումը
կուսակցության մեջ կուսակցության 15-րդ համա-

գումարից հետո, վորպես բուրժուական և մանր-բուրժուական ազգեցությունների արտահայտություն պրոլետարիատի ու նրա կուսակցության վրա, դասակարգային պայքարի սրման պայմաններում, սոցիալիստական վերակառուցման շրջանում։ Աջ թեքման հայացքների եյությունը։ Աջերի տարածայնությունը կուսակցության հետ կուսքաղաքականության բոլոր հիմնական հարցերում։ Աջ թեքումն ու հաշտվողականությունը դեպի նա, վորպես սոցիալիստական վերակառուցման ներկա շրջանի գլխավոր վտանգը։ Աջոպաղողիցիայի հայացքների ու գուշակությունների սնանկությունը, վոր ապացուցվեց հնգամակի առաջին և յերկրորդ տարիների վորձով։ Կենտկոմի նոյեմբերյան պլենումի վորոշումը աջ թեքման և ընկ. Բուժարինի մասին։ Իրենց սխալների լնգունելն աջերի կողմից։

Անհրաժեշտ և պայքարել աջ ոպտորատյունիզմի և հաշտվողականության դեմ, վորպես գլխավոր վտանգի դեմ ներկա պայմաններում, ինչպես և «Ճախ» տրոցիստական և կիսատրոցիկիստական հայացքների դեմ։ Ներկա ողայմաններում յերկու ֆրոնտում պայքարելու, ինդուստրիացման արագ թափի, գյուղատնտեսության մասսական կոլեկտիվացման և կուլակությունը վորպես դասակարգ վերացնելու քաղաքականության հատուկ նշանակությունն ու խնդիրները։

Ոպտորատյունիզմի թագնված ձեռքի և գործնական աշխատանքներում արտահայտվող ոպտորատյունիզմի դեմ վճռական պայքար մղելու անհրաժեշտությունը։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (հայերեն կան Պետրաշի բաժանմունքներում)

1. Լեօնեվ. — Հնգամակի հիմնական դիրքավորումները։
2. Սիրցով. — Հնգամակի լերկրող տարին։
3. Սաալին. — ԽՍՀՄ հողային ինդիքների շուրջը։
4. Մոլոսով. — Կոլխոզային շարժման մասին։
5. Ռ. Ներսիսյան. — Հնդամբակը և կոլանտեսությունների շինարարությունը Խորհրդային Հայաստանում։
6. Սաալին. — Գլխավտույտը հաջողությունների հետեւնքով։
7. Զելիցեր, Ալեկալի. — Համատարած կոլեկտիվացումը և խորհուրդների նոր անելիքները։
8. Նիկոլինա. — Մասսաների մրցությունը։
9. Լենին. — Խնչպես կազմակերպել մրցությունը։
10. Կինզելեվ. — Կոլխոզային շինարարության հրատապ ինդիքները։
11. Սաալին. — Պատասխան ընկեր կոլխոզներին։
» — Գյուղատնտեսական արտեների որինակելի կանոնագրություն։
12. Սաալին. — Լենինիզմի խնդիրների շուրջը։
14. Հոմկոմկուսի (բ) ծրագրեն ու կանոնագրությունը։
15. Կոմինսերնի 10. լր պիենումի ըտնաշենքն ու վորշումները։



«Ազգային գրադարան



NL0180803

